ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի խորհրդի
2016թ.-ի ապրիլի 20-ի թիվ 08/03Լ որոշմամբ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին համապատասխանության վերաբերյալ

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի խորհրդի կողմից հաստատված բանկի Ներքին աուդիտի 2015թ.-ի Աշխատանքային ծրագրի համաձայն, բանկում կատարված հերթական և նպատակային ստուգումների շրջանակներում՝ Ներքին աուդիտի կողմից իրականացվել են նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին բանկի ներքին հսկողության համակարգի համապատասխանության վերաբերյալ ստուգումներ և ուսումնասիրություններ:

Ստուգումների և ուսումնասիրությունների նպատակն է եղել գնահատել ներքին հսկողության, ռիսկերի կառավարման, ներքին տեղեկատվական և հաշվետվողական համակարգերի արդյունավետությունը, որի նպատակով ստուգվել են ներքին հսկողության գործուն համակարգի ներդրման ուղղությամբ կատարված աշխատանքները:

Ներքին հսկողության համակարգի ստուգումները ներառել են նաև՝ բանկում՝ ՀՀ կենտրոնական բանկի, Արտաքին և Ներքին աուդիտի ստուգումների արդյունքներով արձանագրված խնդիրների վերացման և դրանց գծով տրված հանձնարարականների կատարման ուղղությամբ բանկի կողմից իրականացված գործընթացները, որոնք նպաստել են բացահայտված խնդիրների վերացման նպատակով կանխարգելիչ միջոցառումների իրականացմանը:

Կատարված աշխատանքների հիմնական նպատակն է եղել բավարար հիմքերի ստեղծումը, որոնք հնարավորություն են ընձեռնում արժանահավատ կերպով գնահատել բանկի ներքին հսկողության համակարգի արդյունավետությունը և կազմել համապատասխան եզրակացություն, համաձայն որի բանկում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում ներքին հսկողության արդյունավետ և գործուն համակարգի շարունակական զարգացման գործընթացին, որն էլ հիմնականում ապահովում է բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններով սահմանված նպատակների իրականացումը:

Հիմք ընդունելով վերը նշված աշխատանքների արդյունքները՝ Ներքին աուդիտի կարծիքով 2015թ.-ի գործունեության ընթացքում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի ներքին հսկողության համակարգը համապատասխանել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին:

Ներքին աուդիտի վարչության պետ /
Գլխավոր աուդիտոր՝ **Հովհաննես Հովհաննիսյան**